Ի Տփխիսեցի Նիկողայոսէ Տէր-Յակոբեանց՝ մի օրինակ Ընթերցարան Հայոց լեզուի։

Յեսայեայ Պատրիարգէ Սրբոյ Երուսաղէմայ՝ հինգ օրինակ Համառօտութիւն Քրիստոնէական ուսման, մի մի օրինակ Թանգարան խրատու, Յովսէփ Գեղեցիկ, երկու օրինակ Պատմութիւն Սուրբ գրոց Հին և Նոր Կտակարանի, երկու օրինակ Քարոզութիւնք Սրբոյն Թադէի, հինգ օրինակ Քերականութիւն Հայոց, երեք օրինակ Հրահանգ սիրոյ, մի օրինակ Պատմութիւն կամ ուղեցոյց սրբազան գիտելեաց, մի օրինակ Պատասխանիք Մխիթարայ Քահանայի Սկեւռացւոյ յաղագս համապատասխանութեան երկոտասան առաքելոց, մի մի օրինակ Համառօտ Ճարտասանութիւն, Պատմութիւն Յովհաննու Կաթուղիկոսի, Կտակագիր հոգեշահ բանից, Մենաւոր մանկանց, Մատենագրութիւն նախնեաց, Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ և Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Պատրիարքի Ասորւոյ։

Հոգաբարձուք

Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց

Սիմէօն Պօպովեանց

Գրիգոր Սողոմոնեանց

Ի 10 Դեկտեմբերի 1873 ամի

Աստրախան.

Թ. 71

## Ի ՄՈԶԴՈԿԷ

Բարեկրօն Յովհաննէս Աւագ քահանայ Խաչբովեանց գրած է մեզ, զի անցեալ Յունիս ամսոյ ի 25-ն ի Մոզդոկ՝ տեղւոյն Գրիգորեան Հոգևոր դպրոցի հնգերորդ Տարեդարձը կատարելոյն առթիւ՝ նոյն դպրոցի հիմնադիր բարեյիշատակ Գրիգոր Սահիանեան Թումանեանցի գերեզմանին վերայ Հոգեհանգստեան շքեղ հանդէս կատարած է, ուր ներկայ գտնուած է բազմախուռն ժողովուրդ։ Յետոյ նոյն բազմութեամբ գնալով ի դպրոցն՝ Տարեդարձ կատարած են, ուր մի քանի ճառախօսութիւնք ևս եղել են։

Յիշեալ Աւագ քահանայն կյաւելու հաղորդել, զի նոյն դպրոցի Հոգաբարձուք Մեծ. Պարոնայք Մակար Ուլուխանեանց, Յովհաննէս Թումանեանց, Յարութիւն Գեանջումեանց և Պօղոս Չըլթեանց՝ իւրաքանչիւրն 500ական ռուբլի նպաստելով և երեք հազար մանէթ դրամագլուխ կազմելով ի Մոզդոկ մոմարանի գործարան հաստատել են, որոյ արդիւնքը պիտի յատկացնեն ի նպաստ Հոգևոր դպրոցին։

Շնորհակալութեան արժանի և գովելի այսպիսի մի նպատակ և ջանք ոչ սակաւ ուրախութիւն է։

---

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Կ. Պօլսոյ Հայոց Ազգային Հիւանդանոցին յօգուտ և ի նպաստ բացուած մոմարանի և այս առթիւ Պատրիարքարանի կողմէն հրամայուած մի տնօրէնութեան՝ այս ինքն նոյն մոմարանէն թէ եկեղեցեաց և թէ հարսանեաց և այլ հանդիսից կարևոր եղած մոմերը գնելոյ պատուիրանին ընդդէմ անվայելուչ կերպիւ բողոքած էր մի Պարոն, որոյ ի պատասխանի ուղղուած հետևեալ յօդուածին մէջ մեր Ազգայնոց ոմանց վերաբերեալ կարևոր պանծալի տեղեկութիւնք գտնելով՝ մանաւանդ մեր Ազգայնոց ընդունակութեանց և յաջողակութեանց թարգման և նախանձախնդիր իղձեր լինելով՝ արժան կհամարիմք ամբողջութեամբ օրինակել աստէն և հաղորդել ընթերցողաց։

Թէ Եւրոպայի արհեստաւորաց հետ չունի՞ն մրցել Տաճկաստանի արհեստաւորք, և թէ ինչ է Տաճկաստանի արհեստից յառաջադիմութեան խնդիր:

Առ Գ. Մովսէսեան

Օրագրի 1044 թուով գրուած մ՚ ունիք, որ ձեռքս նոր անցաւ. մեկնելով ու տանելով կը ճգնիք հաստատել թէ՝ Հիւանդանոցի Մոմարանը պիտի վնասէ, պարապ բան է անոր շարունակութեան աշխատիլ. պարապ բան է հրաւիրել